EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՈՐՈՇՈՒՄ

Գանգատ թիվ 40864/06

Աշոտ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ եւ այլք ընդդեմ Հայաստանի

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Առաջին բաժանմունք), 2018 թվականի հոկտեմբերի 16-ին հանդես գալով Կոմիտեի հետեւյալ կազմով՝

Քսենյա Տուրկովիչ [Ksenija Turković]՝ *Նախագահ*,

Քրշիշթոֆ Վոյտիչեկ [Krzysztof Wojtyczek],

Պաուլին Կոսկելո [Pauliine Koskelo]՝ դատավորներ,

եւ Ռենատա Դեգեներ [Renata Degener]՝ *Բաժանմունքի քարտուղարի տեղակալ*,

հաշվի առնելով 2006 թվականի հոկտեմբերի 4-ին ներկայացված վերոնշյալ գանգատը,

հաշվի առնելով պատասխանող Կառավարության կողմից 2017 թվականի հունիսի 13-ին ներկայացված հայտարարությունը, համաձայն որի Դատարանից պահանջվում է գանգատը հանել քննվող գործերի ցուցակից, եւ դիմումատուների պատասխանն այդ հայտարարությանը,

անցկացնելով խորհրդակցություն, որոշեց հետեւյալը.

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Դիմումատուների ցանկը նշված է հավելվածում: Բոլոր դիմումատուներին ներկայացրել է Լոնդոնում գործող իրավաբան պրն Վ. Գրիգորյանը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը (Կառավարություն) ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն Գ. Կոստանյանը:

2. Դիմումատուները բողոք են ներկայացրել, որ իրենց սեփականությունից զրկելու հետեւանքով խախտվել են Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի պահանջները, եւ որ դրան հաջորդող դատական վարույթն իրականացվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված երաշխիքների խախտմամբ: Դիմումատուները նաեւ բողոքել են Կոնվենցիայի 6-րդ եւ 13-րդ հոդվածների մասով՝ գործադիր մարմնի՝ օտարման ծրագրին առնչվող որոշումները վիճարկելու համար դատարանի մատչելիության բացակայության վերաբերյալ: Հիմնվելով Կոնվենցիայի 3-րդ, 8-րդ եւ 13-րդ հոդվածների վրա՝ դիմումատուները ներկայացրել են մի շարք այլ բողոքներ իրենց սեփականության օտարման ընթացակարգերի առնչությամբ:

3. 2009 թվականի մարտի 3-ին Դատարանը (Երրորդ բաժանմունք) որոշում է կայացրել Կառավարություն ուղարկել գանգատի մի մասը՝ կապված դիմումատուների՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով ներկայացված՝ դատարանի մատչելիության բացակայության վերաբերյալ բողոքի հետ, եւ դիմումատուներ Կպրյանի եւ Ասրիբաբայանի բողոքները (համապատասխանաբար՝ երկրորդ եւ հինգերորդ դիմումատուներ)՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի եւ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի մասով: Գանգատը մնացած մասով հայտարարվել է անընդունելի:

4. 2011 թվականի դեկտեմբերի 25-ի գրությամբ Դատարանը տեղեկացվել է, որ Կասպար Սարկիսովը (յոթերորդ դիմումատու) մահացել է: Նրա կինը՝ Անժելա Ասրիբաբայանը (երկրորդ դիմումատու), նրա դուստրերը՝ Էլինա Սարկիսովան եւ Ռոզալիա Սարկիսովան (համապատասխանաբար՝ ութերորդ եւ իններորդ դիմումատուներ) եւ նրա որդին՝ Ալեքսանդր Սարկիսովը (վեցերորդ դիմումատու) ցանկություն են հայտնել շարունակել նրա գանգատով վարույթը Դատարանում:

5. Կառավարությունն այս մասով որեւէ նկատառում չի ներկայացրել:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

6. Կառավարության կողմից որեւէ առարկության բացակայության պարագայում Դատարանը որեւէ պատճառ չի տեսնում թույլ չտալու յոթերորդ դիմումատուի օրինական ժառանգներին՝ նրա կնոջը եւ երեխաներին, նրա փոխարեն շարունակելու վարույթը Դատարանում:

Ա. Ինչ վերաբերում է երկրորդ եւ հինգերորդ դիմումատուների՝ Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի մասով բողոքին

7. Հաշտության համաձայնության գալու փորձերը ձախողվելուց հետո, 2017 թվականի հունիսի 13-ի գրությամբ Կառավարությունը տեղեկացրել է Դատարանին, որ գանգատի այս մասով բարձրացված խնդրին լուծում տալու նպատակով նրանք առաջարկել են անել միակողմանի հայտարարություն: Այնուհետեւ նրանք Դատարանից պահանջել են գանգատը հանել քննվող գործերի ցուցակից՝ Կոնվենցիայի 37-րդ հոդվածին համապատասխան:

8. Այդ հայտարարության համապատասխան մասերն ունեն հետեւյալ բովանդակությունը.

«Հայաստանի Հանրապետության իշխանություններն ընդունում են, որ դիմումատուներին գույքից զրկելը չի համապատասխանել Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի պահանջներին: Կառավարությունն ափսոսանք է հայտնում, որ դիմումատուներին գույքից զրկելը չի համապատասխանել օրինականության սկզբունքին՝ չի կատարվել «օրենքով սահմանված պայմանների համաձայն»: Դիմումատուների սեփականության օտարման հետ կապված ոչ մի օրենք չի ընդունվել, եւ օտարման ողջ գործընթացը հիմնված է եղել Կառավարության մի շարք որոշումների վրա:

...

Հայաստանի Հանրապետության կառավարությունը, ընդունելով, որ խախտվել են դիմումատուների իրավունքները, առաջարկում է ամբողջ նյութական եւ ոչ նյութական վնասը, ինչպես նաեւ բոլոր ծախսերը եւ ծախքերը հատուցելու համար դիմումատուներ Մարինե Կպրյանին եւ Անժելա Ասրիբաբայանին միասին վճարել 118 000 եվրո:

Վերոնշյալ գումարն ազատվում է գանձման ենթակա ցանկացած հարկից եւ կփոխարկվի Հայաստանի Հանրապետության արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով, որը ենթակա է վճարման քննվող գործերի ցուցակից գործը հանելու մասին Դատարանի կողմից կայացված որոշման մասին ծանուցելուց հետո երեք ամսվա ընթացքում: Այս գումարները նշված եռամսյա ժամկետում չվճարելու դեպքում Կառավարությունը պարտավորվում է այդ ժամկետը լրանալու օրվանից մինչեւ վճարման օրը վճարել այդ գումարների նկատմամբ հաշվարկված պարզ տոկոսադրույք՝ Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով, որին պետք է գումարվի երեք տոկոսային կետ: Վճարումը համարվում է գործի վերջնական լուծում: ...»

9. 2017 թվականի հուլիս 12-ի գրությամբ դիմումատուները նշել են, որ իրենք բավարարված չեն միակողմանի հայտարարության պայմաններով այն հիմքերով, որ Կառավարությունը չի ընդունել Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտումը, այդ թվում՝ միջամտության իրավաչափ նպատակի բացակայության եւ դրանց համաչափության բացակայության առնչությամբ, ինչպես նաեւ Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորվող իրենց իրավունքների խախտումները: Դիմումատուները

Դատարանից պահանջել են մերժել Կառավարության առաջարկը, նշելով, որ դրանով առաջարկված փոխհատուցման գումարն իրենց պատճառված վնասի համեմատությամբ ծիծաղելի է, եւ միակողմանի հայտարարությունը Դատարանի կողմից ընդունելը թույլ կտա Կառավարությանը խուսափել նրանց բողոքներին ըստ էության պատասխանելուց:

10. Դատարանը վերահաստատում է, որ Կոնվենցիայի 37-րդ հոդվածով սահմանվում է, որ Դատարանը քննության ցանկացած փուլում կարող է որոշել գանգատը հանել գործերի ցուցակից, եթե հանգամանքները հանգեցնում են այդ հոդվածի 1-ին կետի «ա», «բ» կամ «գ» ենթակետերում նշված եզրակացություններից որեւէ մեկին: 37-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետով Դատարանին, մասնավորապես, հնարավորություն է տրվում հանելու գործը քննվող գործերի ցուցակից, եթե՝

> «Դատարանի կողմից հիմք ընդունված որեւէ այլ պատճառով գանգատի քննությունը շարունակելն արդարացված չէ»:

11. Այն նաեւ վերահաստատում է, որ որոշ հանգամանքներում այն կարող է գանգատը 37-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի համաձայն հանել քննվող գործերի ցուցակից՝ պատասխանող Կառավարության կողմից միակողմանի հայտարարության հիման վրա, նույնիսկ եթե դիմումատուները ցանկություն են հայտնում, որ գործի քննությունը շարունակվի:

12. Այդ նպատակով Դատարանը հայտարարությունն ուսումնասիրել է նախադեպային իրավունքից, մասնավորապես՝ *Տահսին Ակարի* գործով վճռից բխող սկզբունքների լույսի ներքո (տե՛ս *Տահսին Ակարն ընդդեմ Թուրքիայի* (նախնական առարկություններ) [ՄՊ] [*Tahsin Acar v. Turkey* (preliminary objections) [GC]], թիվ 26307/95, §§ 75-77, ՄԻԵԴ 2003-VI, նաեւ *ՎԱԶԱ Սպոլկա զ o. o.-ն ընդդեմ Լեհաստանի* (որոշում) [WAZA Spółka z o.o. v. Poland (dec.)], թիվ 11602/02, 2007 թվականի հունիսի 26, եւ *Սուլվինսկան ընդդեմ Լեհաստանի* (որոշում) [Sulwińska v. Poland (dec.)], թիվ 28953/03, 2007 թվականի սեպտեմբերի 18):

13. Դատարանը Հայաստանի դեմ բերված մի շարք գործերով հաստատել է պատասխանող պետության համար Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածից բխող պարտավորությունների բնույթը եւ ծավալը՝ Կառավարության թիվ 1151-Ն որոշմամբ նախատեսվող կառուցապատման ծրագրերի իրականացման նպատակով Երեւանի Կենտրոն թաղային համայնքում գույքի օտարման առնչությամբ (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Մինասյանը եւ Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի* [*Minasyan and Semerjyan v. Armenia*], թիվ 27651/05, §§ 69-72, 2009 թվականի հունիսի 23, *Հովհաննիսյանը եւ Շիրոյանն ընդդեմ Հայաստանի* [*Hovhannisyan and Shiroyan v. Armenia*], թիվ 5065/06, §§ 42-47, 2010 թվականի հուլիսի 20, եւ *Թունյանը եւ այլք ընդդեմ Հայաստանի* [*Tunyan and Others v. Armenia*], թիվ 22812/05, §§ 35-39, 2012 թվականի հոկտեմբերի 9):

14. Հաշվի առնելով Կառավարության հայտարարության մեջ բերված փաստարկների բնույթը, ինչպես նաեւ առաջարկվող փոխհատուցման գումարը, ինչը համապատասխանում է համանման գործերով շնորհված գումարներին (տե՛ս, մասնավորապես՝ *Մինասյանը եւ Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի* (արդարացի փոխհատուցում) [Minasyan and Semerjyan v. Armenia (just satisfaction)], թիվ 27651/05, §§ 17-21, 2011 թվականի հունիսի 7)՝ Դատարանը համարում է, որ գանգատի քննությունը շարունակելն այլեւս արդարացված չէ (37-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետ):

15. Բացի այդ՝ հաշվի առնելով վերոնշյալ դիտարկումները, եւ մասնավորապես հաշվի առնելով այս հարցի վերաբերյալ գոյություն ունեցող հստակ եւ ծավալուն նախադեպային իրավունքը՝ Դատարանը համոզված է, որ մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը, ինչպես սահմանված է Կոնվենցիայով եւ դրան կից արձանագրություններով, չի պահանջում շարունակել գանգատի քննությունը (37-րդ հոդվածի 1-ին կետ՝ վերջում):

16. Դատարանը նշում է պատասխանող Կառավարության կողմից առաջարկվող գումարը վճարելու համար համաձայնեցված եղանակները:

17. Դատարանը վերջապես ընդգծում է, որ եթե Կառավարությունը չկատարի միակողմանի հայտարարության պայմանները, ապա գանգատը կարող է վերստին ընդգրկվել գործերի ցուցակում՝ Կոնվենցիայի 37-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն (*Ժոսիպովիչն ընդդեմ Սերբիայի* (որոշում) [*Josipović v. Serbia* (dec.)], թիվ 18369/07, 2008 թվականի մարտի 4):

18. Հետեւաբար, ճիշտ է գործը հանել քննվող գործերի ցուցակից այնքանով, որքանով այն վերաբերում է Կառավարության միակողմանի հայտարարությամբ կարգավորվող բողոքին:

Բ. Ինչ վերաբերում է գանգատի մնացած մասին

19. Հիմնվելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի վրա՝ դիմումատուները նաեւ բողոքել են, որ նրանց թույլ չեն տվել վիճարկել իրենց սեփականությունից զրկելու թույլտվությունը սահմանող՝ Կառավարության որոշումների օրինականությունը: Երկրորդ եւ հինգերորդ դիմումատուները բողոք են ներկայացրել նույն դրույթի առնչությամբ [՝ պնդելով], որ օտարման ընթացակարգի ընթացքում խախտվել է «կողմերի հավասարության» սկզբունքը, եւ որ դատարանները չեն կատարել իրենց վճիռները հիմնավորելու՝ իրենց պարտականությունը:

20. Հաշվի առնելով գործի փաստերը եւ գանգատը քննվող գործերի ցուցակից հանելու մասին իր որոշումը՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ երկրորդ եւ հինգերորդ դիմումատուների՝ սեփականությունից զրկելու վերաբերյալ բողոքի մասով՝ Դատարանը համարում է, որ ինքը քննել է սույն գանգատում բարձրացված հիմնական իրավական հարցը: Հետեւաբար, այն եզրակացնում է, որ դիմումատուների՝ դատարանի մատչելիության իրավունքի եւ երկրորդ ու հինգերորդ դիմումատուների՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի մասով բողոքների վերաբերյալ առանձին որոշում կայացնելու անհրաժեշտություն չկա (տե՛ս, *mutatis mutandis* (*համապատասխան փոփոխություններով*) *Կամիլ Ուզունն ընդդեմ Թուրքիայի* [*Kamil Uzun v. Turkey*] թիվ 37410/97, § 64, 2007 թվականի մայիսի 10, եւ *Ղասաբյանը եւ այլք ընդդեմ Հայաստանի* [*Ghasabyan and Others v Armenia*], թիվ 23566/05, § 29, 2014 թվականի նոյեմբերի 13):

Այս հիմնավորմամբ Դատարանը միաձայն՝

Ընդունում է ի գիտություն պատասխանող Կառավարության հայտարարության պայմանները՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի մասով եւ դրանում նշված այդ հանձնառության կատարումն ապահովելու եղանակները.

Որոշում է գանգատի այդ մասը հանել իր կողմից քննվող գործերի ցուցակից՝ Կոնվենցիայի 37-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետին համապատասխան:

Հայտարարում է գանգատի մնացած մասն անընդունելի:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2018 թվականի նոյեմբերի 8-ին:

Ռենատա Դեգեներ	Քսենյա Տուրկովիչ
Քարտուղարի տեղակալ	Նախագահ

ՀԱՎԵԼՎԱԾ

1. Աշոտ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, որը ծնվել է 1954 թվականին, ապրում է Երեւանում:

2. Անժելա ԱՍՐԻԲԱԲԱՅԱՆԸ Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, որը ծնվել է 1955 թվականին, ապրում է Օդինցովոյում:

3. Արմեն ԳՐԻԳՈՐՅԱՆԸ Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, որը ծնվել է 1988 թվականին, ապրում է Երեւանում:

4. Հայկ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, որը ծնվել է 1986 թվականին, ապրում է Երեւանում:

5. Մարինե ԿՊՐՅԱՆԸ Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, որը ծնվել է 1958 թվականին, ապրում է Երեւանում:

6. Ալեքսանդր ՍԱՐԿԻՍՈՎԸ Ռուսաստանի Դաշնության քաղաքացի է, որը ծնվել է 1981 թվականին, ապրում է Օդինցովոյում:

7. Կասպար ՍԱՐԿԻՍՈՎԸ Ռուսաստանի Դաշնության քաղաքացի է, որը ծնվել է 1947 թվականին եւ մահացել է 2011 թվականին:

8. Էլինա ՍԱՐԿԻՍՈՎԱՆ Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, որը ծնվել է 1978 թվականին, ապրում է Օդինցովոյում:

9. Ռոզալիա ՍԱՐԿԻՍՈՎԱՆ Ռուսաստանի Դաշնության քաղաքացի է, որը ծնվել է 1977 թվականին, ապրում է Օդինցովոյում: